ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

<<ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ>> ՓԲԸ 21.02.2018թ. ԹԻՎ 137-Ա ՀՐԱՄԱՆՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հայաէրոնավիգացիա ՓԲԸ
(ք. Երևան 0042, Ի. Գասպարյան 33)

28 փետրվարի 2018
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ
Ա. Աղաջանյան Բազմադիրքային Դիտարկման Համակարգերի կենտրոնի ավագ ինժեներ
Հանձնաժողովի գնահատող անդամներ
Գ. Մարկոսյան Բազմադիրքային Դիտարկման Համակարգերի կենտրոնի պետի ժ/պ
Է. Զախոյան Դիտարկման Ծառայության ինժեներ
Հանձնաժողովի բացող անդամներ
Գ. Զաքրյան Բազմադիրքային Դիտարկման Համակարգերի կենտրոնի ինժեներ
Ա. Կարապետյան Ռադիոլոկացիոն համակարգերի կենտրոնի ղեկավար
Հանձնաժողովի քարտուղար
Ա. Կարապետյան քարտուղար

ՕՐԱԿԱՐԳ

1. <<ՀԱՆ-ԳՀԱԾՁԲ-01/18>> ծածկագրով հայտերի բացում և գնահատում՝ հրավերով սահմանված կարգով:
2.Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշում և հայտարարում :

Հանձնաժողովը արձանագրեց, որ հայտ էր ներկայացրել նաև <<Դավիթ Էներջի>> ՍՊԸ, սակայն <<Դավիթ Էներջի>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը անընթեռնելի էր:

Հրապարակվեց հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը և հասցեն՝

1. <<Մավշին>> ՍՊԸ (հասցե՝ ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ. Զառիթափ),
2. <<Ռեդինետ>> ՓԲԸ (հասցե՝ ք. Երևան 0014, Ազատության պող. 24/7-24/8)

Հանձնաժողովի նախագահ Ա. Աղաջանյանը հայտարարեց սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գինը՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

Չափ. հ/հ	Անվանում	<<Մավշին>> ՍՊԸ	<<Ռեդինետ>> ՓԲԸ	Նախահ. Գին ՀՀ դրամ
1	Շենքերի և շինությունների ընթացիք նորոգման աշխատանքների՝ Ստեփանակերտի P3D-W բազմադիրքային դիտարկման համակարգի աշտարակների նորոգում	2 851 200	2 580 000	2 988 920

Հանձնաժողովը արձանագրեց, որ <<Ռեդինետ>> ՓԲԸ կողմից ներկայված հայտում առկա էին անհամապատասխանություններ՝ բացակայում էր տուժանքի համաձայնությանը կից **վճարման**

համաձայնագիրը, ինչպես նաև հայտում ներառված փաստաթղթերը <<Ռեդինետ>> ՓԲԸ կողմից հաստատված չէին էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

<<Մավշին>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտում առկա են սույն ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին:

Համաձայն սույն ընթացակարգի հրավերի 8.2 կետի (Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և **մերժվում են:** Ընդ որում **հայտերի բացման նիստում** հանձնաժողովը **մերժում է** այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ **հայտի ապահովումը** կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին **անհամապատասխան**), ինչպես նաև սույն ընթացակարգի 8.18 կետի (Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են **էլեկտրոնային թվային ստորագրությամբ**)

Հանձնաժողովը որոշեց

1. Մերժել <<Ռեդինետ>> ՓԲ Ընկերությանը:
2. Սույն ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Մավշին>> ՍՊԸ-ին:
3. Էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան 13.03.2018թ. ժամը 11.30 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲ ընկերությունում:

Ա. Աղաջանյան		Հանձնաժողովի նախագահ
Գ. Մարկոսյան		Հանձնաժողովի անդամ
Է. Զախոյան		Հանձնաժողովի անդամ
Գ. Զաքրյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Կարապետյան		Հանձնաժողովի անդամ
Ա. Կարապետյան		Հանձնաժողովի քարտուղար